Տարոսիկ - Փետրուար

Թըխկոց, չըխկոց, կարմիր բո՛ց...
Թըխկոց, չըխկոց, կրա՛կ ու բոց...

Կրակը վառէ՛, պա՛ր բռնէ...
Ուս ուսի՞... Ձեռք ձեռքի՞...
Կրակը վառէ՛, պա՛ր բռնէ՝
Քոչարի... Գորանի... Վերվերի՜...

Զըմփիկ զըմփիկ զարին ա,
իկտա շուշան տարին ա...

Մամէն գնաց բանջարի,
մամէն գնաց բանջարի...

Բանջար չելաւ, խոտ ելաւ,
խոտի տակին ծիտ ելաւ...
Ծիտը թռաւ գերանին,
կանանչ խոտը բերանին...

Զըմփիկ զըմփիկ զարին ա,
իկտա շուշան տարին ա...

Գնացի սարը սընձի,
ոտքս դիպաւ մի գընձի...
Հարսներին քաղել տուի,
տղերքին դաստել տուի...

Վարդ մանուշակ հարսները,
տանձ ու խնձոր տղերքը...
Վարդ մանուշակ հարսները,
սոխ ու սխտոր տղերքը...

Զըմփիկ զըմփիկ զարին ա,
իկտա շուշան տարին ա...
Մուրազ մը, երազ մը,
ծառին կապէ, ճիւղին կապէ,
ծառին ճիւղին ամո՛ւր կապէ՝
կրակին վրայէն ցատկէ՜...
Մուրազդ կատարուի՜...
Տէրնտես, դարմանը կէս,
առ հաց ու կէս, ելիր գեղէս...

Տարոսիկ - Փետրուար

Տէրնտես, մխի դի՛ն տես,
մէկ բուռ ցանես, հազար քաղես...

Մուխը ծուխը,
    ասդի՛ն անդի՛ն,
        արեւե՛լք, արեւմո՛ւտք...

Տէրնտես մխի դի՛ն տես...

Ծուխը մուխը,
    ասդի՛ն անդի՛ն,
        հիւսի՛ս, հարա՛ւ...

Մէկ սմբակ,
    երկու սմբակ,
        երեք սմբակ,
            չորս սմբակ,
                քառասմբակ...

Լեռնէն կու գայ,
    ձորէն կու գայ,
        սպիտակ ձիով կու գայ...

Թա՛մբը, սա՛նձը,
        ո՞վ է սա ձիաւորը...

Սուրբ Սարգիսի օրհնութենով,
    օրհնութենով,
        ծառս ի ծաղկեցաւ...
Ծառ ծաղկեցաւ ,
    ճիւղ բազմեցաւ
        կանանչ ու կարմիր...

Ալնի՜ս պալնիս,
    հաւատա՜մ Սուրբ Սարգիս,
սպիտակ ձի ունիս,
    անունը ինչ է նշանածիս...
Ռուբէն...
Ռուբէն կամ Գուրգէն...
        Ռուբէն, Գուրգէն...

Տարոսիկ - Փետրուար

Գուրգէն կամ Սուրէն...
Ռուբէն, Գուրգէն, Սուրէն...
Սուրէն կամ Արսէն...
Ռուբէն, Գուրգէն, Սուրէն, Արսէն...
Արսէն կամ Խորէն...
Ռուբէն, Գուրգէն, Սուրէն, Արսէն, Խորէն՝
ձայնը կու գայ ախոռէն...
Ռուբէն, Գուրգէն, Սուրէն, Արսէն, Խորէն՝
ձայնը կու գայ խորանէն...

Ալնի՜ս բալնիս,
հաւատամ Սուրբ Սարգիս,
սպիտակ ձի ունիս,
անո՛ւնը ըսէ նշանածիս...

Սագօ...
Սագօ կամ Կարօ...
Սագօ, Կարօ...
Կարօ կամ Խաչօ...
Սագօ, Կարօ, Խաչօ...
Խաչօ կամ Մկօ...
Սագօ, Կարօ, Խաչօ, Մկօ...
Մկօ կամ Պետօ...
Սագօ, Կարօ, Խաչօ, Մկօ, Պետօ,
Օօ՜ Պըճինկօ՛...

Նշան...
Սուրբ Նշան...
Վարդան...
Քաջ Վարդան...
Օհան...
Ձենով Օհան...
Տիգրան...
Մեծն Տիգրան...
Վահան...
Մեր փեսա՜ն...

Եկանք եկանք, այլի հո...
Ինչո՞ւ եկաք, այլի հո...
Աղջիկտեսի, այլի հո...
Աղջիկ չունինք, այլի հո...

Տարոսիկ - Փետրուար

Տեսեր ենք, տեսեր, այլի հո...

Ի՞նչ կար գլխուն, այլի հո...
Կարմիր լաչակ, այլի հո...
Ի՞նչ կար մէջքին, այլի հո...
Կանանչ գօտիկ, այլի հո...
Ինչո՞վ եկաք, այլի հո...
Սանամարին ծակ տապակով, այլի հո՜...

Հոյ Նազանըմ, Նազաըմ...
Կիւլ Նազանըմ, Նազանըմ...

Նազան դու բարով եկար,
խոր խոր ձորերով եկար,
կանանչ սարերով եկար...

Հոյ Նազանըմ, Նազաըմ...
Կիւլ Նազանըմ, Նազանըմ...

Նազան դու բարով եկար,
ծաղիկ քաղելով եկար,
քիշմիշ ծամելով եկար...

Ընկերներ, ընկերներ, սիրուն ընկերներ...
Ի՞նչ կ՚ուզէք, ի՞նչ կ՚ուզէք մեր այս խումբերէն...

Աղուոր աղջիկ մը տեսանք,
անիկա կ՚ուզենք...

Ան աղջկան անունը մեզի յայտնեցէք...
Ան աղջկան անունը Նազան է...

Փափուկ է, տկար է, չի կրնար քալել...
Փափուկ էնէ, տկար էնէ,
կա՛ռք մը կը բերենք...
Մէկ սմբակ,
երկու սմբակ,
երեք սմբակ,
չորս սմբակ,
քառասմբա՜կ...

Տարոսիկ - Փետրուար

Լեռնէն կու գայ,
ձորէն կու գայ,
սեւ ձիով կու գայ...

Թա՛մբը, սա՛նձը,
ո՞վ է աս ձիաւորը...

Ասպետ,
տասնապէտ,
հարիւրապէտ,
հազարապէտ,
սպարապէտ՝
Քաջ Վարդա՞ն։
Մանուկեա՞ն...
Մանուկեա՞ն, թէ Միսաքեան...
Միսաքեա՞ն, թէ Մանուշեան...
Մանուշեա՞ն, թէ Մանճիկեան...
Մանճիկեա՞ն, թէ Մամիկոնեան...
Քաջ Վարդան
Մամիկոնեան,
աջ ձեռքին սուր,
ձախ ձեռքին վահան...
Վահա՞ն, մեր փեսա՞ն...
Սո՛ւր ու վահան...
Աջլի՞կ... ձախլի՞կ ...,
թէ՛ աջլիկ... թէ՛ ձախլիկ...
Չնաշխարհիկ...

Քաջ Վարդան
Մամիկոնեան
եկաւ ըսաւ՝
Ո՞ւր է հարիսան...

Պարկը գոց,
պարկը բաց...
Երեք քառորդը գնաց,
քառորդը մնաց...

Ակուլ տուկուլ պիպազէ,
սակալ մակալ դուկազէ,

ով դու Նահարէ,
hարիս պապա hարիսա,
hարիս մամա hարիսա,
կատուի կոճակ,
մին պլոճակ,
ճը՛րթ պը՛րթ։

Ցորենը,
կաթսային մէջ ցորենը…
Սոխը միսը,
ցորենը…
Սոխը միսը, կարագը,
կաթսային մէջ ցորենը…
Սոխը միսը, կարագը եւ շերեփը…

Շերեփը՝
փա՛յտ է, թո՛ւղթ է,
փա՛յտ է, թո՛ւղթ է,
փա՜յտ է…

Հարէ՛ hարէ hարիսա՜…
Ալարայր… Քարայր…
Ժիրայր… Նորայր… Հրայր…

Հարէ՛ hարէ hարիսա՜…
Մեծ մայր… Մեծ hայր…
Կնքամայր… Կնքահայր…
Քոյր ու եղբայր…
Մօրաքոյր… Մօրեղբայր…
Հօրաքոյր… Հօրեղբայր…

Եկան էլ հէր ու հօրքուր,
եկան էլ մէր ու մօրքուր…
Եկան ու եկան, եկան ու եկան…
Եկան քեռի քեռեկին,
խնամի ու տեգերկին…
Եկան ու եկան, եկան ու եկան…

Եկան սանիկ սանամէր,
հարսնաքուր ու hարսնաղբեր…
Եկան ու եկան…

Տարոսիկ - Փետրուար

Եկան մօտիկ հեռաւոր,
զոքանչ կեսուր ու քաւոր…
        Հարիսան կերան կշտացան….
            Հարիսան կերան չկշտացան…

Ձեզ Բարեկենդան,
        մեզ բարի Զատիկ…

Բարեկենդան եկեր է,
        կօշիկս ոտքէս թռեր է…
            Կօշիկը ոտքէն թռեր է…

Բարեկենդան եկեր է,
        տաբատիս կոճակը փրթեր է…
            Տաբատին կոճակը փրթեր է…

Ձեզ բարեկենդան,
        մեզ բարի Զատիկ…
Երկու ճիւղեր խաչաձեւ,
սոխի գլուխ,
        եօթը փետուր,
            կարմիր շապիկ,
                կանանչ գօտիկ,
                    Ակլատիզ…
Տի՛զ տիզ Ակլատիզ,
        մազերը պի՛զ պիզ Ակլատիզ…

Բարեկենդան եկեր է,
        խելքս գլխէս թռեր է…

Մեր խաղին մէջ ո՛րջ մը կայ… հըըըըը՜…
Որջին մէջը ա՛րջ մը կայ… աաա՛հ…
                Կը քնանա՜յ… հաաաաա՜…

Ինչո՞ւ կը քնանայ…
                Ձմեռը կը քնանայ…

Ա՛ջ ձախ…
        ա՛ջ ձախ…
Իմ աջ ձեռքս, կ՚երթայ կու գայ, կ՚երթայ կու գայ…

Տարոսիկ - Փետրուար

Ա՛ջ ձախ... ա՛ջ ձախ...
Իմ աջ ձեռքս եւ ձախ ձեռքս, կ՚երթայ կու գայ,
կ՚երթայ կու գայ...
Ա՛ջ ձախ... ա՛ջ ձախ...

Ճոր ճոր, ճոր մամա,
ճոր մամային քով գնա,
փիլաւ եփէ թարխանա,
կե՛ր կեր կշտացիր,
քիչիկ մը՛ն ալ ինծի՛ բեր...

Իմ աջ ձեռքս, եւ ձախ ձեռքս, եւ գլուխս,
կ՚երթայ կու գայ, կ՚երթայ կու գայ...
Ա՛ջ ձախ... ա՛ջ ձախ...

Իմ աջ ձեռքս, եւ ձախ ձեռքս, եւ գլուխս, եւ մարմինս,
կ՚երթայ կու գայ, կ՚երթայ կ ու գայ...
Ա՛ջ ձախ... ա՛ջ ձախ...

Ճոր ճոր, ճոր գնա,
ճոր մամային քով գնա,
տե՛ս մաման ինչ եփեր է,
կորկոտ ապուր եփեր է,
կե՛ր կեր կշտացիր,
դգալը առ ու փախի՜ր...

Մեր խաղին մէջ ո՛րջ մը կայ... հը՛ը՛ը՛ը՛...
Որջին մէջը ա՛րջ մը կայ ... աաաա՛հ...
Կը քնանա՜յ... հաաաաա՜...

Ե՞րբ պիտի արթննայ...
Երբ Բարեկենդա՛նը գայ...
վա՛յ...
Գացէք տեսէք ո՞վ է կերեր գայլը...
Գացինք տեսանք ա՛րջն է կերեր գայլը...

Բարեկենդան եկեր է,
երեսը կարմիր ներկեր է...
Երեսը կանանչ ներկեր է...
Բարեկենդան եկեր է,
կօշիկը ծուռ հագեր է...
Կօշիկը ծուռ մուռ հագեր է...